ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 4439-Ա « 30 » հոկտեմբերի 2025թ.

ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.3 ԵՎ ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽԻ Հ.90 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հունան Մարգարյանի լ/ա Մանուշակ Ավետյանի դիմումը՝ Ներքին Չարբախի 12-րդ փողոցի 3-րդ նրբանցքի հ.3 և Ներքին Չարբախի հ.90 հասցեներում գտնվող հողամասերի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել 2010 թվականի հունվարի 11-ի Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵՇԴ/1354/02/09 վճիռը, ՀՀ կադաստրի կոմիտեի 15.04.2025թ. հ.ԱՏ-15042025-01-1086 և 10.06.2025թ. հ. ԱՏ-10062025-01-0646 տեղեկանքները:

Տեղագրական հանույթի համաձայն՝ Ներքին Չարբախի հ.90 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 2500.0քմ, որը համապատասխանում է փաստաթղթերում ամրագրված 2500.0քմ մակերեսի հետ, իսկ Ներքին Չարբախի 12-րդ փողոցի 3-րդ նրբանցքի հ.3 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 360.0քմ, որը նույնպես համապատասխանում է փաստաթղթերում ամրագրված 360.0քմ մակերեսի հետ, սակայն համադրումները վերացնելուց հետո, այն կազմում է 348.70քմ: Ներքին Չարբախի 12-րդ փողոցի 3-րդ նրբանցքի հ.3 հասցեում գտնվող հողամասի սահմանները 348.70քմ մակերեսի չափով ճշտելու մասով՝ առկա է քաղաքացու համաձայնությունը:

Ներքին Չարբախի հ.90 հասցեի հողամասը գտնվում է ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 11-րդ գոտում, իսկ Ներքին Չարբախի 12-րդ փողոցի 3-րդ նրբանցքի հ.3 հասցեի հողամասը՝ 10-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.07.2025թ. Դ-64894-25 եզրակացությունը՝ կից փաստաթղթերով.

1.Սահմանել, որ Ներքին Չարբախի 12-րդ փողոցի 3-րդ նրբանցքի հ.3 (տնամերձ՝ 348.70քմ) և Ներքին Չարբախի հ.90 (վարելահող՝ 2500.0քմ) հասցեներում գտնվող հողամասերի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետատարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ